# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՄՔԾ/2025/L-21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | LAS PRINT | LAS PRINT | LAS PRINT | ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ | Տ ե խ ն ի կ ա կ ա ն ն կ ա ր ա գ ի ր 1. Նույնականացման քարտը պետք է տպագրվի “Նույնականացման քարտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 05.04.2012 թվականի N 411-Ն որոշման պահանջների համաձայն` սակայն առանց չիպի, որի փոխարեն պետք է շարունակվի զարդանախշը` պահպանելով գեղարվեստական դիզայնը (ձևաորումը): 2. Նույնականացման քարտի սխեման պահանջում է որակյալ տեխնոլոգիաների |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ենթակառուցվածքների պլատֆորմ, որը պետք է լինի բավական փոփոխուն (ճկուն) և համաչափ: Այն պետք է հնարավորություն ապահովի իր մեջ ընդունելու օրենսդրական փոփոխությունները և պետական ծառայությունների տեխնոլոգիական բարեփոխումները: Նույնականացման քարտը պետք է նաև թույլ տա նոր տվյալների ավելացման հնարավորությունը: Այն պետք է լինի կոնտակտային ինտերֆեյսով: 3. Նույնականացման քարտը պետք է պատրաստված լինի պոլիկարբոնատ պլաստիկ նյութից (PC)` 10 տարի դիմակայունության ժամկետով (մատակարարվող յուրաքանչյուր քանակության համար մատակարարը պետք է ներկայացնի թեստային հաշվետվություններ անկախ լաբորատորիաների կողմից), այն պետք է ունենա շերտավորմանը հակազդեցության հնարավորություն` քարտը չպետք է կոտրվի սովորական մաշվածությունից և Հայաստանի Հանրապետության կլիմայական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պայմաններից: 4. Նույնականացման քարտը պետք է համատեղելի լինի ըստ հետևյալ ստադարնտների կամ թեստերի.  ICAO 9303` մեքենայաընթեռնելի ճամփորդական փաստաթղթեր (TD1)  ISO/IEC 7810 ID Card` Ֆիզիկական առանձնահատկություններ,  ISO 10373-3 մեխանիկական թեստեր` ճկում,  ISO 10373-3 մեխանիկական թեստեր` ոլորում,  ISO 10373-3 մեխանիկական թեստեր` խտացում,  ISO 10373-1 կլիմայական թեստեր` ջերմաստիճան,  ISO 10373-1 կլիմայական թեստեր` խոնավություն,  ISO 10373-3 էլեկտրական թեստեր՜ ստատիկ էլեկտրաէներգիա,  DIN EN ISO 4892-2, B այլ թեստեր` ուլտրամանուշակագույն լույս,  ISO 9001-2001 ISO 9001 Կապալառու կազմակերպության արտադրական տեղանքը պետք է ունենա ISO 9001 ստանդարտին համապատասխանության գործող հավաստագիր  ISO/IEC 7816-1 Ֆիզիկական առանձնահատկություններ,  ISO/IEC 7816-5 Համարակալման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | համակարգ և գրանցման ընթացակարգ առաջարկ ներկայացնողների համար,  ISO/IEC 7816-6 Միջոլորտային տվյալների տարրեր՝ փոխադարձ փոխանակման համար,  ISO/IEC 7811 Նույնականացման քարտերի գրառման տեխնիկայի նկարագրություն: 5. Կապալառու կազմակերպությունը պետք է երաշխավորի ամբողջական և չմասնատվող նույնականացման քարտի ձևավորումը: Պետք է ապահովի նույնականացման քարտի մակերևույթի այնպիսի կառուցվածք, որ քարտի նմանակումը, վերարտադրումը կամ որևէ ձևով կեղծումը լինի խիստ դժվար: Պոլիկարբոնատե քարտի վերջնական տարբերակը չպետք է բացվի կամ շերտավորվի: Այն բացելու ուժային ցանկացած փորձ պետք է հանգեցնի քարտի՝ անզեն աչքով նկատելի այնպիսի վնասմանը, որ դրա հետագա կիրառելիությունը անհնարին կդարձնի: 6. Նույնականացման քարտը պետք է ունենա հետևյալ անվտագության պահանջները.  |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом << ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՄՔԾ/2025/L-21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | Գիլյոշային պատկերներ, այդ թվում՝ ռելիեֆ և փոփոխական բարակ գիծ: Բարակ գծի կառուցվածքը պետք է մասամբ ծածկի նկարի հատվածը, □ Ծիածանային տպագրություն, □ միկրոտեքստ □ ուլտրամանուշակագույն ֆլուորեսցենտ տպագրություն: 7. Սահմանված բոլոր տվյալներն ու տպագրված տարրերը պետք է լինեն արտաքին շերտի ստորին մասում: 8. Նույնականացման քարտի չափերը - ID 1 (ինչպես ICAO 9303 և ISO 7810 ստանդարտներում)՝ 8,5x5,4սմ չափերի, հաստությունը՝ 840 միկրոն: 9. Նույնականացման քարտի բլանկը պետք է հնարավորություն ապահովի ներկայում գործող կենսաչափական համակարգի միջոցով քարտի վրա հայերեն և անգլերեն լեզուներով գրաֆիկորեն անհատականացնելու հետևյալ տեղեկատվությունը. ա) ազգանունը, անունը, հայրանունը, բ) ծննդյանվայրը, օրը, ամիսը, տարեթիվը, գ) սեռը, դ) քաղաքացիությունը, ե) ազգությունը՝ քաղաքացու ցանկությամբ, զ) բնակության վայրը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | (նշվում է միայն երկիրը), է) քաղաքացու լուսանկարը, ը)նույնականացման քարտը տրամադրած Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ստորաբաժանման կոդը, թ) քարտի տրամադրման և վավերականության ժամկետները, ժ) քարտի համարը:<br>10. Մատակարարման ենթակա նույնականացման քարտերն իրենց տեխնիկական հատկանիշներով, արտաքին տեսքով, հնարավորություններով պետք է համընկնեն ներկայում Հայաստանի Հանրապետության տարածքում տպագրվող և օգտագործվող նույնականացման քարտերին (բացառությամբ չիպի): Միաժամանակ, մատակարարման ենթակա նույնականացման քարտերը պետք է հնարավոր լինի անհատականացնել ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից ներկայում շահագործվող կենսաչափական համակարգի սարքերի և սարքավորումների միջոցով (նույնականացման քարտի տպագրությունը` Bauer սարքի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | միջոցով)՝ապահովելով դրանց վրա տպագրությունը, որակի ստուգումը, թողարկումը և օգտագործումը՝ առանց շահագործվող սարքերի, դրանց դետալների, գործող ծրագրային համակարգի փոփոխության: 11. Համարակալումը: Նույնականացման քարտի բլանկի համարակալումն իրականացվում է առաջին էջում՝ ներկայում շրջանառության մեջ գտնվող նույնականացման քարտերին համապատասխան մասում: Նույնականացման քարտի 202700 հատ բլանկների համարները պետք է սկսվեն 01764805(x) համարով և ավարտվեն 01967504(x) համարով: 12. Փաթեթավորում: Նույնականացման քարտերը պետք է փաթեթավորված լինեն 200 քարտ պարունակող թղթե (կարտոնե) արկղերի մեջ, որոնք հետագայում զմռսվում ու դասավորվում են 4000 նույնականացման քարտ տարողության կարտոնե արկղերի մեջ: 13. Տեղափոխությունը մինչև ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն կատարվում է Կապալառուի կողմից: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 14. Նմուշը՝ կցվում է ՀՀ կառավարության 05.04.2012 թվականի N 411-Ն որոշման Հավելված 2-ը: 15. Տպագրվող Նույնականացման քարտի նմուշը պետք է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: |